**Հավելված 4**
**«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԷԱՃԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ-1

ք.Երևան ____/____________/2018թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյան-ի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Մեդտեխսերվիս ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Մանուկյան-ի, որը գործում է Մեդտեխսերվիս ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:
**2.4 Վաճառողը պարտավոր է՝**
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 518250.00 (հինգ հարյուր տասնութ հազար երկու հարյուր հիսուն ) ՀՀ դրամ : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը,

պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է

նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]։
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով

այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| **Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ** | **Մեդտեխսերվիս ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2** | **Հասցե՝ ք. Երևան, Լեո-12** |
| **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** | **Հայէկոնոմբանկ ԲԲԸ** |
| **11500166513800** | **Հ/Հ 163008142792** |
| **01503448** | **02205001** |
| **Արմեն Աբգարի Մուրադյան** | **Աշոտ Մանուկյան** |
| **___________** | **___________** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:54:36 GMT+04:00

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2018.11.28 15:55:56 AMT

Հավելված N 1
____/____________/2018թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 33131220/1 | Ատամնաբուժական ունելի Ատամնաբուժական ունելի | ЗАО “СТРУМ” | Թերապևտիկ ստոմատոլոգիայում կիրառվող,թեքված անկյան տակ եզրերով,մետաղական | հատ | 990.00 | 5940.00 | 6 | ք.Երևան, Կորյունի 2 | 6 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:55:10 GMT+04:00

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գործիք:ֆորմատ՝ հատ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է [8836fc49.pdf](8836fc49.pdf) | | | | | |
| 4 | 33141211/413 | Գործիքների երիկամածև տեփուր Գործիքների երիկամած և տեփուր | ROLLMED CO., LTD | Մետաղական երիկամածև թասակ, նախատեսված է ստոմատոլոգիական գործիքների և այլ պարագաների տեղադրման համար,չափսը-միջին:ֆորմատ՝ հատ:Պարտադիր | հատ | 2100.00 | 12600.00 | 6 | հասցեն / ենթակա քանակը / Ժամկետը<br>ք.Երևան, Կորյունի 2 / 6 / Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:55:22 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է [ba79b783.pdf](ba79b783.pdf) | | | | | | | |
| 8 | 33131160/3 | Ալմաստե տանձաձև բոր Ալմաստե տանձաձև բոր | ROLLMED CO., LTD | Գչիր ալմաստե, տանձաձև աշխատա նքային հա տվածով, ն ախատեսվ ած ռեստա վրացիայի մակրո և մ իկրոձևավ որման հա մար,չափս ը- մաքսիմալ աշխատա նքային տր ամագիծը 0,12սմ , կարմիր, ա շխատանք | հատ | 366.00 | 18300.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 50 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:55:32 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ային երկա<br>րությունը<br>4,1 մմ:Պա<br>րտադիր<br>պայման է<br>ապրանքի<br>չօգտագործ<br>ված<br>լինելը:<br>Կցված է<br>[e10c418d.<br>pdf] | | | | | | | |
| 9 | 33131160/<br>4 | Ալմաստե<br>ծվածև բոր<br>Ալմաստե<br>ծվածև բոր | ROLLMED<br>CO., LTD | Գչիր<br>ալմաստե<br>ծվածև աշ<br>խատանք<br>ային հատ<br>վածով, չա<br>փսը-<br>մաքսիմալ<br>աշխատա<br>նքային տր<br>ամագիծը<br>0,12 սմ,<br>կարմիր, ա<br>շխատանք<br>ային երկա<br>րությունը<br>3,2 մմ: Նա | հատ | 366.00 | 36600.00 | 100 | հասցեն | ենթակա<br>քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան,<br>Կորյունի 2 | 100 | Պայմանագր<br>ի ուժի մեջ<br>մտնելու<br>օրվանից 25<br>օրացուցայի<br>ն օրվա<br>ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:55:44 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | խատեսված տուրբինային ծայրակալի համար:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է [00ba9925.pdf](00ba9925.pdf) | | | | | | | |
| 12 | 33141211/414 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED /Dochem/ | Կոմպոզիտ և ատամների փայլեցման խոզանակ արհեստական մազերից,գավաթաձև աշխատանքային գլխիկով:Պարտադիր պայման է ապրանքի | հատ | 160.00 | 8000.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 50 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:55:54 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | չօգտագործված լինելը: Կցված է [bc83e990.pdf] | | | | | | | |
| 13 | 33141211/415 | Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED /Dochem/ | Փայլեցնող գլանաձև սիլիկոնե գլխիկ նախատեսված լցանյութի փայլեցման համար: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է [affac313.pdf] | հատ | 128.00 | 6400.00 | 50 | հասցեն<br>ք.Երևան, Կորյունի 2 | ենթակա քանակը<br>50 | Ժամկետը<br>Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 14 | 33141211/416 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED | Կոմպոզիտ և ատամների փայլեցման | հատ | 160.00 | 8000.00 | 50 | հասցեն<br>ք.Երևան, Կորյունի 2 | ենթակա քանակը<br>50 | Ժամկետը<br>Պայմանագրի ուժի մեջ |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:03 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | /Dochem/ | խոզանակ արհեստական մազերից,կոնաձև աշ աշխատանքային գլխիկով:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է fd44c9fc.pdf | | | | | | | մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 15 | 33141211/417 | Մատրիցաներ թիթեղանման Մատրիցաներ թիթեղանման | ЧП "ЛАТУС" | Պոլիեթիլենային կաղապար,թափանցիկ:ֆորմատ՝հատ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: | հատ | 9.90 | 9900.00 | 1000 | հասցեն<br>ք.Երևան, Կորյունի 2 | ենթակա քանակը<br>1000 | Ժամկետը<br>Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:13 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կցված է ae7e0f3c.pdf | | | | | | | |
| 20 | 33131160/10 | Սկավառակապահիչ Սկավառակապահիչ | ЧП “ЛАТУС” | Մետաղական բռնիչ նախատեսված հարթեցման սկավառակի համար, ,որը համապատասխանում է հարթեցման սկավառակների հավաքածուին :Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է 45d2dbea.pdf | հատ | 1180.00 | 14160.00 | 12 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 12 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 29 | 33141212/24 | Լուսային կարծրացմ | ЧП “ЛАТУС” | Լուսային կարծրացմ | հատ | 34000.00 | 170000.00 | 5 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:22 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ան կոմպոզիտ LATELUX Pro 50g | | ան կոմպոզիտի հավաքածու ունիվերսալ միկրոհիբրիդային կոմպոզիտ, 10 ներարկիչ տարբեր գույների ընդհանուր 50 գրամ, ադհեզիվ 3 մլ և օրտոֆոսֆորական թթու 1 հատ 3գ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է f92d94e4.pdf | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 5 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 30 | 33141212/25 | Հոսուն–ֆլոու | ЧП “ЛАТУС” | Ներարկիչ 2.2 մլ | հատ | 2170.00 | 10850.00 | 5 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:32 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կոմպոզիտ LATELUX flow | | լուսային կարծրացման հոսուն կոմպոզիտ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է [32eb65ed.pdf](32eb65ed.pdf) | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 5 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 31 | 33141200/2 | Փայլեցնող մածուկ ALPHA-PRO | Dental Technologies, Inc. | Ատամները փայլեցնող մածուկ կլոր սրվակի մեջ, տարբեր գույների:Պարունակությունը 2 գրամ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործ | հատ | 79.00 | 7900.00 | 100 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 100 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:41 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծված լինելը: Կցված է e799848c.pdf | | | | | | | |
| 37 | 33141211/424 | Ատամնաբուժական շաղախման ապակի Ատամնաբուժական շաղախման ապակի | ООО “Влад Мива” | Ապակի , որը նախատեսված է ատամնաբուժական ցեմենտի շաղախման համար:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը: Կցված է c6d1940a.pdf | հատ | 300.00 | 7200.00 | 24 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 24 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում: |
| 38 | 33141211/425 | Ռետրակցիոն թել Pe-Корд | ООО “Влад Мива” | Ռետրակցիոն թել N2, թելի երկարությունը 1,5մետր: Պարտադիր պայման | հատ | 1600.00 | 6400.00 | 4 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան, Կորյունի 2 | 4 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:56:51 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | է<br>ապրանքի<br>չօգտագործ<br>ված<br>լինելը:<br>Կցված է<br>b54a6821.<br>pdf | | | | | | | և օրվա<br>ընթացքում: |
| 50 | 33141212/<br>27 | Սիլիկոն դր<br>ոշմանյութ<br>լրակազմ<br>SILAXIL<br>BOX | Lascod S.<br>p. A. | Սիլիկոն -դ<br>րոշմանյու<br>թ<br>կոմպլեկտ<br>C սիլիկոն<br>1 շերտ<br>900գ, 2<br>շերտ 150<br>մլ, կատալ<br>իզատոր<br>60 մլ:Պար<br>տադիր<br>պայման է<br>ապրանքի<br>չօգտագործ<br>ված<br>լինելը:<br>Կցված է<br>edb588c0.<br>pdf | հատ | 13500.00 | 108000.00 | 8 | հասցեն<br>ք.Երևան,<br>Կորյունի 2 | ենթակա<br>քանակը<br>8 | Ժամկետը<br>Պայմանագր<br>ի ուժի մեջ<br>մտնելու<br>օրվանից 25<br>օրացուցայի<br>և օրվա<br>ընթացքում: |
| 51 | 33141212/ | Սիլիկոն դր | Lascod S. | C-սիլիկոն | հատ | 6900.00 | 69000.00 | 10 | հասցեն | ենթակա | Ժամկետը |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:57:00 GMT+04:00

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 28 | ոշմանյութ<br>2 շերտ և կ<br>ատալիզա<br>տոր<br>լրակազմ<br>SILAXIL և<br>ENERSYL | p. A. | դրոշմանյո<br>ւթ 2 շերտ<br>medium ծո<br>րունությա<br>ն 150մլ,կա<br>տալիզատ<br>որ 60 մլ: Պ<br>արտադիր<br>պայման է<br>ապրանքի<br>չօգտագոր<br>ծված<br>լինելը:<br>Կցված է<br>54a73a2a.<br>pdf | | | | | | քանակը | |
| | | | | | | | | | ք.Երևան,<br>Կորյունի 2 | 10 | Պայմանագր<br>ի ուժի մեջ<br>մտնելու<br>օրվանից 25<br>օրացուցայի<br>ն օրվա<br>ընթացքում: |
| 52 | 33141211/<br>426 | Թրթռասեղ<br>ան լաբոր<br>ատոր Թրթ<br>ռասեղան լ<br>աբորատո<br>ր | ROLLMED<br>CO., LTD | Վիբրոսեղ<br>ան նախա<br>տեսված<br>գիպսե մոդ<br>ելներով ա<br>շխատելու<br>համար:Պ<br>արտադիր<br>պայման է<br>ապրանքի<br>չօգտագոր<br>ծված<br>լինելը: | հատ | 19000.00 | 19000.00 | 1 | հասցեն | ենթակա<br>քանակը | ժամկետը |
| | | | | | | | | | ք.Երևան,<br>Կորյունի 2 | 1 | Պայմանագր<br>ի ուժի մեջ<br>մտնելու<br>օրվանից 25<br>օրացուցայի<br>ն օրվա<br>ընթացքում: |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:57:08 GMT+04:00

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կցված է 7fc1ab70.pdf | | | | | |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ԳՆՈՐԴ**

**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ**

**Հասցե` ք. Երևան, Կորյունի 2**

**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**

**11500166513800**

**01503448**

**Արմեն Աբգարի Մուրադյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2018.11.28 15:56:31 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**

**Մեդտեխսերվիս ՍՊԸ**

**Հասցե` ք. Երևան, Լեո-12**

**Հայէկոնոմբանկ ԲԲԸ**

**Հ/Հ 163008142792**

**02205001**

**Աշոտ Մանուկյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:57:22 GMT+04:00

Հավելված N 2
____/____________/2018թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 1 | 33131220/1 | Ատամնաբուժական ունելի | | | | | | | | | | | 5940.00 | 5940.00 | 5940.00 |
| 4 | 33141211/413 | Գործիքների երիկամաձև տեփուր | | | | | | | | | | | 12600.00 | 12600.00 | 12600.00 |
| 8 | 33131160/3 | Ալմաստե տանձաձև բոր | | | | | | | | | | | 18300.00 | 18300.00 | 18300.00 |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:57:37 GMT+04:00

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 33131160/4 | Ալմաստե ծվածև բոր | | | | | | | | | | | 36600.00 | 36600.00 | 36600.00 |
| 12 | 33141211/414 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև | | | | | | | | | | | 8000.00 | 8000.00 | 8000.00 |
| 13 | 33141211/415 | Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև | | | | | | | | | | | 6400.00 | 6400.00 | 6400.00 |
| 14 | 33141211/416 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | | | | | | | | | | | 8000.00 | 8000.00 | 8000.00 |
| 15 | 33141211/417 | Մատրիցաներ թիթեղանման | | | | | | | | | | | 9900.00 | 9900.00 | 9900.00 |
| 20 | 33131160/10 | Սկավառակ ապահիչ | | | | | | | | | | | 14160.00 | 14160.00 | 14160.00 |
| 29 | 33141212/24 | Լուսային կարծրացման կոմպոզիտ | | | | | | | | | | | 170000.00 | 170000.00 | 170000.00 |
| 30 | 33141212/25 | Հոսուն –ֆլոու կոմպոզիտ | | | | | | | | | | | 10850.00 | 10850.00 | 10850.00 |
| 31 | 33141200/2 | Փայլեցնող մածուկ | | | | | | | | | | | 7900.00 | 7900.00 | 7900.00 |
| 37 | 33141211/42 | Ատամնաբու | | | | | | | | | | | 7200.0 | 7200.0 | 7200.0 |

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:57:46 GMT+04:00

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4 | ժական շաղախման ապակի | | | | | | | | | | | 0 | 0 | 0 |
| 38 | 33141211/425 | Ռետրակցիոն թել | | | | | | | | | | | 6400.00 | 6400.00 | 6400.00 |
| 50 | 33141212/27 | Սիլիկոն դրոշմանյութ լրակազմ | | | | | | | | | | | 108000.00 | 108000.00 | 108000.00 |
| 51 | 33141212/28 | Սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ և կատալիզատոր լրակազմ | | | | | | | | | | | 69000.00 | 69000.00 | 69000.00 |
| 52 | 33141211/426 | Թրթռասեղան լաբորատոր | | | | | | | | | | | 19000.00 | 19000.00 | 19000.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ**

**Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2**

**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**

**11500166513800**

**01503448**

**Արմեն Աբգարի Մուրադյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2018.11.28 15:57:05 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**

**Մեդտեխսերվիս ՍՊԸ**

**Հասցե՝ ք. Երևան, Լեո-12**

**ՀայԷկոնոմբանկ ԲԲԸ**

**Հ/Հ 163008142792**

**02205001**

**Աշոտ Մանուկյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2018.11.27 13:58:12 GMT+04:00

Հավելված N 3
____/___________/2018թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հh ______________ | հh ______________ |
| հվhh ______________ | հվhh ______________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`

______________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները`

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Ատամնաբուժական ունելի | Թերապևտիկ ստոմատոլոգի | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | այում կիրառվող,թեքված անկյան տակ եզրերով,մետաղական գործիք: ֆորմատ՝ հատ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 8836fc49.pdf) | | | | | | | |
| 4 | Գործիքների երկամաձև տեփուր | Մետաղական երկամաձև թասակ, նախատեսված է ստոմատոլոգիական գործիքների և այլ պարագաների տեղադրման համար,չափսը-միջին:Ֆորմատ՝ հատ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ba79b783.pdf) | | | | | | | |
| 8 | Ալմաստե տանձաձև բոր | Գչիր ալմաստե, տանձաձև աշխատանքային հատվածով, նախատեսված ռեստավրացիայի մակրո և միկրոձևավորման համար,չափսը-մաքսիմալ աշխատանքային տրամագիծը 0,12սմ , կարմիր, աշխատանքային երկարությունը 4,1 մմ: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է e10c418d.pdf) | | | | | | | |
| 9 | Ալմաստե ձվաձև բոր | Գչիր ալմաստե ձվաձև աշխատանքային հատվածով, չա | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փսը-մաքսիմալ աշխատանքային տրամագիծը 0,12 սմ, կարմիր, աշխատանքային երկարությունը 3,2 մմ: Նախատեսված տուրբինային ծայրակալի համար: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 00ba9925.pdf) | | | | | | |
| 12 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև | Կոմպոզիտ և ատամների փայլեցման խոզանակ արհեստական մազերից,գավաթաձև աշխատանքային գլխիկով:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինե | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | լը:(Կցված է bc83e990.pdf) | | | | | | |
| 13 | Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև | Փայլեցնող գլանաձև սիլիկոնե գլխիկ նախատեսված լցանյութի փայլեցման համար: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է affac313.pdf) | | | | | | |
| 14 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | Կոմպոզիտ և ատամների փայլեցման խոզանակ արհեստական մազերից,կոնաձև աշ աշ խառանքային գլխիկով:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է fd44c9fc.p | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | df) | | | | | | | |
| 15 | Մատրիցաներ թիթեղանման | Պոլիեթիլենային կաղապար,թափանցիկ:ֆորմատ՝ հատ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է ae7e0f3c.pdf) | | | | | | | |
| 20 | Սկավառակապահիչ | Մետաղական բռնիչ նախատեսված հարթեցման սկավառակի համար, ,որը համապատասխանում է հարթեցման սկավառակների հավաքածուին:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 45d2dbea.pdf) | | | | | | | |
| 29 | Լուսային կարծրացման կոմպ | Լուսային կարծրացման կոմպ | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ոզիտ | ոզիտի հավաքածու ունիվերսալ միկրոհիբրիդային կոմպոզիտ, 10 ներարկիչ տարբեր գույների ընդհանուր 50 գրամ, ադհեզիվ 3 մլ և օրտոֆոսֆորական թթու 1 հատ 3գ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է f92d94e4.pdf) | | | | | | | |
| 30 | Հոսուն –ֆլոու կոմպոզիտ | Ներարկիչ 2.2 մլ լուսային կարծրացման հոսուն կոմպոզիտ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 32eb65ed.pdf) | | | | | | | |
| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | Փայլեցնող մածուկ | Ատամները փայլեցնող մածուկ կլոր սրվակի մեջ, տարբեր գույների:Պարունակությունը 2 գրամ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է e799848c.pdf) | | | | | | | |
| 37 | Ատամնաբուժական շաղախման ապակի | Ապակի , որը նախատեսված է ատամնաբուժական ցեմենտի շաղախման համար: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է c6d1940a.pdf) | | | | | | | |
| 38 | Ռետրակցիոն թել | Ռետրակցիոն թել N2, թելի երկարությո | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ւնը 1,5մետր: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է b54a6821.pdf) | | | | | | |
| 50 | Սիլիկոն դրոշմանյութ լրակազմ | Սիլիկոն -դրոշմանյութ կոմպլեկտ C սիլիկոն 1 շերտ 900գ, 2 շերտ 150 մլ, կատալիզատոր 60 մլ:Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է edb588c0.pdf) | | | | | | |
| 51 | Սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ և կատալիզատոր լրակազմ | C-սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ medium ծորունության 150մլ, կատալիզատոր 60 մլ: Պարտադիր պայման է | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 54a73a2a.pdf) | | | | | | |
| 52 | Թրթռասեղան լաբորատոր | Վիբրոսեղան նախատեսված գիպսե մոդելներով աշխատելու համար: Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:(Կցված է 7fc1ab70.pdf) | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ապրանքը հանձնեց** | **Ապրանքը ընդունեց** |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| ____________________________ | ____________________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված N 3.1
____/___________/2018թ. կնքված
ԵԱԾԱՊՁԲ-2018/16-5-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ -ի (այսուհետ` Գնորդ) և Մեդտեխսերվիս ՍՊԸ (այսուհետ` Վաճառող)

միջև 20 թ.______________________________ -ին կնքված N________________________________

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Ատամնաբուժական ունելի | հատ | |
| Գործիքների երիկամաձև տեփուր | հատ | |
| Ալմաստե տանձաձև բոր | հատ | |
| Ալմաստե ձվաձև բոր | հատ | |
| Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև | հատ | |
| Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև | հատ | |
| Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | հատ | |
| Մատրիցաներ թիթեղանման | հատ | |
| Սկավառակապահիչ | հատ | |
| Լուսային կարծրացման կոմպոզիտ | հատ | |
| Հոսուն –ֆլոու կոմպոզիտ | հատ | |
| Փայլեցնող մածուկ | հատ | |
| Ատամնաբուժական շաղախման ապակի | հատ | |
| Ռետրակցիոն թել | հատ | |
| Սիլիկոն դրոշմանյութ լրակազմ | հատ | |
| Սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ և կատալիզատոր լրակազմ | հատ | |

| | | | |
|---|---|---|---|
| Թրթռասեղան լաբորատոր | հատ | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________

ազգանուն, անուն

______________________________

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________

ազգանուն, անուն

______________________________

ստորագրություն